Trust Audit

Trust Audit CJSC
321 room, 8 street Tumanyan
0001 Yerevan
Republic of Armenia

Tel: +374(10) 516111
Fax: +374(10) 655111
Email: info@trustaudit.am
www.trustaudit.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ
Խորհրդին

Աուդիտորական կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲ Ընկերության (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31-ը դեկտեմբերի 2017թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՄԽ կանոնագիրք)*, և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն այդ կանոնների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները

հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի ու ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հավաստիացում, որ պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և որտեղ կիրառելի է անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

«Թրասթ Աուդիտ» ՓԲԸ
տնօրեն Հայկ Մարգարյան

Աուդիտի ղեկավար
Նարեկ Մխիթարյան

30 մարտի 2018թ
Երևան

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթագրություն	2017 31դեկտեմբեր	2016 31դեկտեմբեր
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	64,519	65,819
Ոչ նյութական ակտիվներ		142	162
Հետաձգված հարկային ակտիվներ	18	227	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		***64,888***	***65,981***
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		568	-
Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	5	2,197	135
Կանխավճարներ շահութահարկի գծով		51	503
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	6	31	81
Այլ ընթացիկ ակտիվներ		262	262
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		***3,109***	***981***
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		***67,997***	***66,962***
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Սեփական կապիտալ	7		
Բաժնետիրական կապիտալ		12,490	12,490
Չբաշխված շահույթ		3,822	3,352
Պահուստային կապիտալ		983	483
Ընդամենը սեփական կապիտալ		***17,295***	***16,325***
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	8	31,651	37,807
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		***31,651***	***37,807***
Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ վարկեր և փոխառություններ	9	3,409	1,454
Կրեդիտորական պարտքեր և կանխավճարներ	10	15,642	11,376
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		***19,051***	***12,830***
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		**67,997**	**66,962**

Արթուր Ղանդիլյան
տնօրեն

Արտավազդ Ազնաուրյան
գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 33-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

		Ըստ գործառույթի	
Հազար ՀՀ դրամ	Ծանոթագրություն	2017	2016
Շարունակվող գործունեություն			
Հասույթ և այլ եկամուտներ	11	102,383	106,088
Ծառայությունների ինքնարժեք	12	(79,155)	(82,326)
Համախառն շահույթ		**23,228**	**23,762**
Իրացման ծախսեր	13	(2,849)	(2,501)
Վարչական ծախսեր	14	(24,059)	(22,494)
Գործառնական այլ եկամուտներ	15	6,389	4,297
Գործառնական այլ ծախսեր	16	(230)	(287)
Գործառնական շահույթ		**2,479**	**2,777**
Ֆինանսական ծախսեր	17	(256)	(209)
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս)		-	526
Շարունակվող գործունեությունից շահույթ մինչև հարկումը		**2,223**	**3,094**
Շահութահարկի գծով (ծախս) փոխհատուցում	18	176	(519)
Շարունակվող գործունեությունից տարվա շահույթ		**2,399**	**2,575**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
Տարվա այլ համապարփակ եկամուտ հարկերից հետո		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք հարկերից հետո		**2,399**	**2,575**

Արթուր Ղանդիլյան
տնօրեն

Արտավազդ Ազնաուրյան
գլխավոր հաշվապահ

Ըստ գործառույթի կազմված շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյուքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 33-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

«Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

		Ըստ Բնույթի	
Հազար ՀՀ դրամ	Ծանոթա-գրություն	2017	2016
Շարունակվող գործունեություն			
Վաճառքի եթերաժամանակից եկամուտ		6,459	9,881
Առևտրային գովազդից եկամուտ		861	1,169
Հովանավորչությունից եկամուտ		417	392
ՀՀ Պետական բյուջեի դրամաշնորհներից եկամուտ		94,646	94,646
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ		6,156	4,255
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից եկամուտ		-	526
Պաշարների վաճառքից և այլ եկամուտ		233	-
Տոկոսային եկամուտ		-	42
Ընդամենը եկամուտներ		**108,772**	**110,911**
Աշխատանքի վարձատրություն		(60,936)	(62,166)
Հեռուստահաղորդումների արտադրության ծախսեր		(11,318)	(11,961)
Մաշվածություն և ամորտիզացիա		(14,137)	(10,650)
Հեռարձակման ծախսեր		(3,113)	(7,382)
Այլ ծախսեր	19	(17,045)	(15,658)
Ընդամենը ծախսեր		**(106,549)**	**(107,817)**
Զուտ շահույթ մինչև հարկումը		**2,223**	**3,094**
Շահութահարկի գծով (ծախս) փոխհատուցում	18	176	(519)
Տարվա շահույթ		**2,399**	**2,575**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկերից հետո		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք հարկերից հետո		**2,399**	**2,575**

Արթուր Ղանդիլյան
տնօրեն

Արտավազդ Ազնաուրյան
գլխավոր հաշվապահ

Ըստ բնույթի կազմված շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյուքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 33-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

«Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

Հազար ՀՀ դրամ

Հազար ՀՀ դրամ	Բաժնետիրական կապիտալ	Չբաշխված շահույթ	Պահուստային կապիտալ	Ընդամենը
Մնացորդ առ 31/12/2015	**12,490**	**2,001**	**451**	**14,942**
Շահաբաժին	-	(1,192)	-	**(1,192)**
2016թ. զուտ շահույթ	-	2,575	-	**2,575**
Հատկացում պահուստային կապիտալին	-	(32)	32	-
Մնացորդ առ 31/12/2016	**12,490**	**3,352**	**483**	**16,325**
Շահաբաժին	-	(1,429)	-	**(1,429)**
2017թ. զուտ շահույթ	-	2,399	-	**2,399**
Հատկացում պահուստային կապիտալին	-	(500)	500	-
Մնացորդ առ 31/12/2017	**12,490**	**3,822**	**983**	**17,295**

Արթուր Ղանդիլյան
տնօրեն

Արտավազդ Ազնաուրյան
գլխավոր հաշվապահ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 33-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

Հազար ՀՀ դրամ

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Զուտ շահույթ	2,658	2,575
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	(177)	519
Շահույթ մինչև շահութահարկը	2,481	3,094
Ճշգրտումներ		
Մաշվածություն և ամորտիզացիա	14,096	10,650
Արտարժույթի փոխարկումից (օգուտ) վնաս	-	(492)
Ֆինանսական ծախսեր	256	209
Պաշարների (աճ) նվազում	(568)	7
Դեբիտորական պարտքերի և այլ ընթացիկ ակտիվների (աճ)/նվազում	(2,062)	(372)
Կրեդիտորական պարտքերի և այլ ընթացիկ պարտավորությունների աճ/(նվազում)	102	658
Վճարված շահութահարկ	(200)	(1,599)
Վճարված տոկոսներ	(256)	(209)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**13,849**	**11,946**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների (ձեռքբերում)/օտարում	(8,269)	(20,231)
Ակտիվներին վերաբերող շնորհների աճ/(նվազում)	(6,156)	(4,255)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(14,425)**	**(24,486)**
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Շահաբաժինների վճարում	(1,429)	(1,192)
Ստացված տոկոս	-	42
Վարկերի և փոխառությունների (վճարում)/ստացում	1,955	1,438
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոնցերի զուտ հոսքեր	**526**	**288**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ հոսք	(50)	(12,252)
Ժամանակաշրջանի սկզբի դրությամբ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	81	12,333
Ժամանակաշրջանի վերջի դրությամբ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**31**	**81**

Արթուր Ղանդիլյան
տնօրեն

Արտավազդ Ազնաուրյան
գլխավոր հաշվապահ

Դրամական հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 33-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ